ամբողջ շրջան մը։ Հիմա, եթէ այս բոլորակս սկսինք կամաց կամաց ծռել. իսկոյն Արևու շարժմանը մէջ տարբերութիւն մը պիտի նշմարենք. իսկ եթէ բոլորակը այնպէս մը ծռենք որ շրջագիծը մեր տեսութեան ուղղութեան վրայ գայ, այն ատեն կեղծ Արևուն շարժումը մեզի պիտի տեսնուի իրական Արևու շարժման պէս։ Ուրեմն վերոյիշեալ դանդաղելու շարժումը և կենդանի առերևոյթ է, վասն զի բոլորակին կորութիւնը կը հանդիպի մեր տեսութեան շառաւիղին ուղղութեանը վրայ։ Երկրիս հորիզոնին վրայ արևակայքի երկու կէտերը փոփոխական են՝ ըստ հորիզոնաց, մինչդեռ երկնքի վրայ սակաւ ժամանակի համար ունին որոշ կէտեր։ Ներկայ ժամանակ Ամառնային արևակայն կը գտնուի երկաւոր համաստեղութեան սահմանագլուխ η չորրորդ կարգի աստղէն մէկ աստիճան գրեթէ դէպի հիւսիս։ Իսկ ձմեռնայինը կը գտնուի Աղեղնաւորի μ չորրորդ կարգի աստղէն երկու աստիճան դէպի հարաւ։ Ուստի, հիմա, սիալ է այն բացատրութիւնը որ կ՚ըսենք Արևադարձ Խեցգետնի՝ ամառուան համար, և Արևադարձ Այծեղջիր՝ ձմեռուան համար. ընդհակառակն պէտք է անուանել Արևադարձ Երկաւորի, և Արևադարձ Աղեղնաւորի, սակայն այս կէտերս ալ հաստատուն չեն։ Կ՚երևի թէ մեր նախնիք նկատի առած ըլլալու են այս կէտերուս դարաւոր փոփոխութիւնները։ Իրենց տեսութիւնը յայտնի կ՚երևի այն պատճառաւ որ այս կէտերը համաստեղութեանց հետ չեն կապած, այլ եղանակի հետ, յորջորջելով ամառնային և ձմեռնային յեղյեղակներ։

Եւ յիրաւի, ինչպէս կրնար աչքերնէն վրիպել իրենց գործածած Հակայ մի ամբողջ շրջանին մէջ՝ որ 1460 տարիներու բոլորում մ՚էր, կենդանակերպները կը տեղափոխուին 20° 21′ 32″ աղեղամբ։ Եթէ Քրիստոնէութեան բարգաւաճման համար Ջնջուած չըլլար հին կրօնից մատեանները, այսօրուան օրս հին Հայոց աստեղագիտութեան վրայ աւելի գաղափար կ՚ունենայինք։ Արդէն այս և աստեղագիտական բառերն հեղինակութիւն մը ցոյց կու տան և ոչ ուրիշ ազգէ փոխ առում մը և այս յայտնի նշան մ՚է թէ ժամանակին շատ զարգացեալ էր աստեղագիտութիւնը Հայոց մէջ։

Շարունակելի Հ. ԽՈՐԷՆ Ս.

ՊԱՏՈՒԷՐ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՉ ԳՐՈՑ

ԱՌ ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ ՍՏԱՑՈՂՍ ԻՒՐ

« Խօսք պատուէր գրոյս[1] *առ այնոսիկ որ ժառանգեն զսա յապագայ աւուրս ժամանակաց։ —*

Յանմատոյց լուսոյ կազմեալ են ճանապարհք իմ, և ճառագայթարձակ հրաբորբոք ջահիւ պայծառացեալ են նրբագոյն շառաւիղք իմ։

Որք հաւատով և անթերի մտօք դիմէք առ իս, եկայք ուրախութեամբ զհետ

1. Պատուէրս տարիներ առաջ օրինակած եմ Սաղիմեան Հմր. 1434 գրչագրի ցուցակէն. ուր գժբազդօրէն նշանակուած չէր թէ ինչ կը ներկայացնէր այն գրչագիրն, ուստի հանուած է. ինձ շատ հաւանական կը թուի, որ կամ Հնագոյն Աստուածաբանի մը կը պատկանի ան, և կամ Լոգիա (Λογία) կոչուած վարդապետարանի մը։ Մեծատառ վերնագիրը մենք գրած ենք։ Հ. Բ. Ս.

© National Library of Armenia

ծագման լուսոյ իմոյ, և տարայց զձեզ ի քաղաքն իմ սուրբ. ցնծալով խաղացէք և մտէք ուրախութեամբ ընդ դրունս նորա։

Ընտիր են շինուածք նորա և շափիւղայ են քարինք պարսպի նորա. վերնաշեմն յոսկւոյ սրբոյ, և յականց զմրիտեայ ներքնաշեմ նորա։

Ի լիբանանէ փայտ նորա. և երազ պտրցն(պատրաստեցան) մանկունք քաղաքի իմոյ. խորանք որ ոչ շարժեսցին ցիցք նորա. մաքուր է ճանապարհ նորա. ի գնալդ քո մաքրեաց զսիրտ քո և տեսցես զվառս քաղաքի իմոյ։

Դուստր եմ ես հօրն լուսոյ, և տեսանեմ զերեսս ծննդեան և բիսման. և յամենայն ժամ համարձակիմ առ նա։

Որք կամիք տեսանել զնա, բազկօք ձերովք բարձէք զիս, և միշտ ի վերայ ստեանց և սրտից ձերոց կառուցէք զիս։

Բարձր բարբառով ընթերցիր և ի միտ պահեա զոր ուսար յինէն։

Ընկալ յինէն լոյս, և մտիր առանց երեսաց ամօթոյ առ տէր քո, և շրջեա համարձակ յանաչառ և յահագին հրապարակս նորա։

Պայծառ են քան զարեգակն և զլուսին զամբարք իմ. և որ գայ առ իս՝ ընդ աջմէ աթոռոյն Աստուծոյ տեսցէ զիս։

Հիմունք իմ հաւասար անդնդոց, և գլուխ իմ բարձր է քան զկամարս երկնից։

Ունիմ զամենայն մարգարէսն և զառաքեալսն գումարեալ առ իս, զհայրապետս և զվարդապետս անթիւս։

Եկայք առ իս մանկունք Սիոնի, սիրողք Աստուծոյ և ցանկացողք օրինաց նորա։

Ուսարուք զիս առաջնորդք և ժողովուրդք, և տարայց զձեզ առ երկնաւոր հայրն իմ։

Առ իս է բնակեալ Աստուած հայր իմ, և ես քաղաք հանգստեան եմ հոգւոյ և որդւոյ նորա։

Կարմրագոյն է ծագիկ իմ, և անհառելի է հոտ նորա. ա՛ռ զիս ի հաւատս սրտի քո, և ուսով բարձ զիս։

Քաղցր եմ ի կոկորդս ձեր և պարարտ է համ իմ ի ծամելիս նոցա, որք հաւատով կարող են հաշակել զիս։

Բանալի եմ սրտի քո, որդեակ իմ, և ի բազումս բաւէ զօրութիւն իմ։

Հերձուածողաց մի՛ ընծայեր զիս, զի թերահաւատոցն հակառակ եմ ես. շատ ողբաս՝ թէ տաս զիս նոցա. զի ո(ա)դրով և ժանգով լնուն զիս։

Հաւատարիմ արանց շնորհեա զիս, և տգէտ՝ որ խնդրէ, մի՛ արգելուր զիս. և գրաւական քեզ ընդ իմ՝ ընկալ զսէրս, հաւատս նոցա։

Ցես մի՛ մոռանար զսէր իմ. շրթամբք քո սիրով համբուրեա զիս, և ի սենեակս սրտի քո և հոգւոյ բնակեցո զիս։

Ճարտասան իմաստնոց շնորհեա զիս, զի պախարակեն զհերձուածսն ի ձեռն լուսոյ իմոյ։ — Պատասխանի մարդոյն։

Վա՛յ ինձ թէ ծրի կամ ընդ վայր ի թերահաւատս կամ ի տգէտս տամ զքեզ, հաւատ և յոյս իմ։

Այլ մոռք ի հոգիս և հոգւովս ի շունչս և շնչովս յարիւնս և արիւնովս՝ ի մարմինս ծրարեալ պահեմ զքեզ։

Նարդոս, կինամոն և ստաշիս ի(է)մ, և ի բաժանել հոգւոյս՝ չէ ինչ հնար հեռանալ ի քէն, այլ մարմնոյս. ի զուրն մահու մուծանեմ զքեզ, որ դու յաւուրն ահագին պակեսցես զգլուխ իմ։»

© National Library of Armenia